Մատթէոս
Արքեպիսկոպոսապետ
և Կաթողիկոս
ամ. Հայոց,
ռյէ. 1858.

ՄԱՏԹԷՈՍ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Արքեպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական, նախամեծար աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ. Հարազատ որդւոց Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Գերաշնորհ Աբրահամ բէկի Մատաթեանց, Համբարձում Աղայի Հախումեանց, պարոն Աբրահամու Խանդամիրեանց. պարոն Սարգսի Մատաթեանց և Արժանայարգ Յօհաննէս բէկի Ալչիբէկեանց Քրիստոսական Սուրբ ողջունիւ ծանուցանեմք, զի մեք ըստ մերում Հովուապետական պարտաւորութեան ցանկացօղ գոլով բարեկարգութեան ազգի և եկեղեցւոյ և լուսաւորութեան մանկանց նորին համաձայն ընտրութեան հասարակութեանն Շուշւոյ 'ի 24 Յունվարի այսր ամի ըստ զօրութեան կոնդակի մերոյ տուելոյ նոյն հասարակութեան 'ի 4 Դեկտեմբերի անցելոյ 1859 ամի, վասն յառաջադիմութեան հոգևոր դպրոցին Շուշւոյ, առն այսու մերով հայրապետական կոնդակաւ հաստատեմք ընդ Ձեզ հոգաբարձու հոգևոր դպրոցին Շուշւոյ, և ձեզ փոխանորդ զհինգ անձինս նշանակեալս 'ի խնդրագրի հասարակութեան առաքեցելոյն առ ձեզ ընդ ձեռն երկուց պատգամաւորաց պարոն Ռաֆայէլ Բէկլարեանց և Գէորգայ Ամբրումեանց. Եւ առն այսու տամք ձեզ զիրաւունս կառավարութե նոյն դպրոցին, և՛ հաստատեմք և՛ յանձնեմք 'ի տեսչութիւն ձեր զբազմատեսակ աղբիւրս արդեանց հաստատելոց 'ի Կանխատրեայն յօգուտ նորին, յաւելեալ 'ի վերայ այնց և զօրբադրամ արդիւնս, և զարդիւնս մոմավաճառութեանց բոլոր Թեմին Ղարաբաղու. Պարտաւորեցաք և զԿանխատորեայն, զի յամ ձեռնարկս ձեր լիցի ձեզ օժանդակ, և զձեզ պարտաւորեմք յաւարտ իւրաքանչիւր ամի մատուցանել զհաշիւս ամ մտից և ծախուց դպրոցին նոյն հոգևոր Ատենին. Ո՛չ անագան հանդերձեալ եմք մեք առաքել 'ի վիճակն ձեր զԹեմական Առաջնորդ Եպիսկոպոս. Սա խորհրդակցութեամբ ընդ ձեզ ունի հոգալ զայլոց պակասորդաց և առաջարկել 'ի հաստատութիւն մեր.

Մաղթելով 'ի վերնախնամ տեսչութենէ զօժանդակութիւն այսր բարի և ազգապայծառ ձեռնարկութեան ձերոյ՝ խոստանամք չարգելուլ զգործակցութիւն մեր յաղագս հաստատութեան և ծոխութեան հոգևոր դպրոցին ձեր Շուշւոյ յաւիտենանս մերոց կենաց.

Ի վերայ խոնարհին ստորագրեալ է Մատթէոս Կաթողիկոս ամենայն Հայոց.

Համար 322.

'Ի 15 Յունիսի 1860 ամի
'Ի Սուրբ Էջմիածին.

47197
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014893
47197

47197

ԳՐԱԴԱՐԱՆ